

Օյը վզավըդ պատ ընկնի,
Օյը կծի քեզ,
Օխճին լղին խմիս,
Օձը լուղուտ կծի,
Օխտը մարդի քինիս, վեչ միսթարվիս,
Օխընի կա ջիգարիդ,
Օշափ կու տա քեզ:

Շամօքուրին. — Ղարաբաղի օրհնութիւնը եւ անէծքը հաւաքել է Աղեքսանդր Կարապետեան Մելիք Շահնազարեան Շուշեցի: Նա մի երկու տարի Շուշի գաւառային դարպացում սովորելով, թողել է եւ ժուել ծառայութեան եւ պարապել ինքնակրթութեամբ: Նա եղել է երկար տարիներ մաքսատան կառավարչի օդնական. եւ յետոյ կառավարիչ Պարսկահայ Թումանեանների առեւտրական տան Ղարաբաղի կալուածների մօտ 20 տարի, որտեղ մի օր անտառի միջով ձիով անցնելուց ծափ մի ճիւղ աչքին դիպելով կուրանում է բոլորովին 1905 թ: Նա ունի մօտ 300 երես 436 տողից բաղկացած ոտանաւորներ, զանազան բովանդակութեամբ 1870 թուից սկսած մինչեւ այժմ: Նա 80 տարեկան է, առողջ կազմուած քով, թուղթը գնում է առաջը ձափառում գրում մատիտով, յետոյ իր դուստրներից մէկը արտագրում է նրա թելադրութեամբ:

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ



ՑԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԸՒՅՉԱՆ

առ — առուակ: — լ — լեռ: — լշ — լեռնաշղթայ:

(Շարունակութիւն:)

ԺԳ.

Իշկալա եւ Բէհեկվան վատակները:

Մուրզուից ցած, դէպի հիւսիս Բորչիսա, Բերդ գիւղերի եւ Ցիտուրեաի աւերակների մօտ Ճորոխին խառնուում Խչկալա (միջնաբերդ) առուակը որ իշնում է Եանդունի, Սառուղուրդի եւ Ցկարեստի լ-րից, ակունքում անուանուում է Պալլի (ձկնոտ) կամ Խուրշիդ (արեւածկնային): Այս առուակը ընդունում է Զէյլին, Զատ, Զիլտէ Քէօփի, Դից-գեղ (Դիզքէօյ), Մաքրիէտի, Կոստանէի առուները, որոնք ոռոգում են համանուն գեղերն եւ նրանց պարագաների հանդերը: 1872ի քարտէզի վրայ այս վատակն

անուանուում է Զայիր-սու (մարգերի առուակ) այն ընդարձակ Մարգերի անունով, որ պատաժ են վտակը, իրենց մշտագալարով եւ գեղն էլ անուանուում է Մարգագետին (Մակրիետի): Այս վտակի մէջ թափուում են Գուրչատի, Բաշքեյօյ (գլխաւոր գեղ) առուակները ձախից, Ազուրյ, Պանչուրեստ, Մամանիտ՝ աջից, որոնք միանալով Մարգաստանում կուտակուած ջուրին՝ խառնուում են Ճորոխին:

Իշկալա անունն առաջացել է վտակի ակունքից ո՞չ շատ հեռու բարձունքի վրայ հիմնուած բերդից-միջնաբերդից, պարսպից եւ երկու հին մեծ քարէ կամուրջներից, որոնք գարեւոր անցեալ ունին: Անշուշտ այս կալուածքը երկրորդական, երրորդական իշխանի յատուկ չէնք ու կառուցուածք չէ՝, այլ առաջնակարգ, թագաւորական տանն է պատկանել, մինչեւ որ պեղումներ չկատարուին, չի պարզուել իշկալայի եւ Մակրիէտի անունները: Իշկալա վտակը մօտ 15 կիլոմետր երկարութիւն ունի, Ցկարեստի լեռների բարձունքը կազմում է սրա եւ Խոփայ վտակի ջրբաժան գիծը, որի երկարութիւնը հազիւ թէ տասը կիլոմետր լինի, իսկ Ճոլից հեռաւորութիւնը ընդ ամէնը 7—8 կիլոմետր է:

Իշկալա վտակից 12 կիլոմետր ցած Ճոլին են թափուում Զալօնա եւ Բեհեկլան լեռների իջած Բեկիլվան վտակի ջրերը, որոնք բղիսում են Կվախերիսի լ-րից Մեւ Շովի ափերից 6—7 կիլոմետր հեռաւորութեամբ, Մակրիալ վտակի բարձունքից: Բեհեկլան գեղը, լեռը, վտակը, անցքը 1872ի քարտէզի վրայ Պակաւան է տպագրուած. իսկ ժողովուրդը կանչում է Փէհէվան: Տարակոյս չկայ, որ հիւանդու ուղեղները փոփոխում են այս անունները քաղաքական ինչ-ինչ նկատումներով: Իսկ գիտութիւնը մինչեւ օրս պեղումներ չէ՝ կատարել, որ վերջ տայ ճշմարտութեան առաջ ամէն տեսակ կեղծիքներ երեւալուն: Փէհէվան վտակի նախնական բազուկը իջնում է Եանդունի (Հրդեհուած—գուցէ Հրաբրիսային) լեռներից, որն այս օր Զէրիա անունն է կրում եւ սրանից աւելի ցած 2 կիլոմետր հեռաւորութեամբ գտնուում է Գիդրիվետ գեղը իր բաղմաթիւ աւերակներով: Փէհէվան վտակի, Փէհէվան առուակի վրայ, Փէհէվան լեռան ստորոտում գտնուում են Փէհէվան բերդ ամբոցի աւերակները, սրանց մօտ է

այն փառաւոր անցեալի ողորմելի Փէհլէլան գեղը:

Պահլաւան վտակի առուակներն են, ձախից Ցուզունա, Զերեսա (աւերակ), Օխորդիա, Ենիմահլա, Բուլտախնետ. աջից՝ Պահլաւան, Գդրեվետ, Մուրկովիտ և Կատալ-ախիա, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց աւերակներով եւ հանդերով:

Իչկալա ջրերից մինչեւ Փէհլէվանի վտակը ծորոխն են թափուոմ ձախից՝ Դավկարա, Արչունտ, Չկատուլետ, Մոցխերի եւ Զեղուրանի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը: ծորոխը Փէհլէվանի վտակից ցած գալով՝ նախ ընդունում է Բերջել (պարթեւ) առուակը Ստ. Մարադիտ ամրոցի մօտ, ուր գտնուում է Բերջեւի աւերակ մեծ տաճարը. ապա Ստ. Մարադիտի առուն, որին մօտ է երկրորդ Բերջեւի տաճարի աւերակները եւ այգեստանները: Սրանցից յետոյ ծորոխին խառնուում է Կարա-Շալվար առուակը Կիրա-Շալվար գեղից, որից քիչ ցած Վ. Մարադիտ առուն է խառնուում ծորոխին, Մածիսի, Լես-Պիրի մօտ, Միրվերի քով: Սրանցից ցած ծորոխի գելտայում թափուում են — Մախօ, Մուլվանետի, Թօլօկօ եւ Զանալ առուները, որոնցից 3—4 վերստ աւելի հիւսիս-արեւմուտք ծորոխն ինքն է խառնուում Սեւ-Շովին: Այս առուակների վրայ են նուրբետի, Սիմոնիտի, Մախօ, Թօլօկօ, Տխիրինալ, Մուլվանետի եւ Զանալ գեղերը:

Այս գաւառին կից գտնուում է Գոնիա գաւառակը իր ծովափնեայ նաւահանգիստներով եւ գեղերով, որոնցից նշանաւոր են, Գոնիա, Գոնիա (աւերակներ) բերդ, Աղլէէ, Գոնիա գեղ, Կանլի-դերէ, Սարդիկ, Սարդիկ, Սարդի մացրա, Շոպա, Ուշ-Կարդաշ, Մակրիալ, Զանդախոռ, Խալբաշ (չին տաճարով), Մակրիալ նաւահանգիստ, Բաղկան, Քեօփրիջայ, Կուլի մացրա, Համշէն մացրա, Սովել մացրա, Լիման, Մանելողի եւ Սուլթան Սելիմ:

Պալիսար վտակի Աւազանի նկարագրութեան ծանօթութեան մէջ յիշեցինք Բահլիալսի, Բահլի-բարի, Պահլար կամ Պալիսարի եւ Բագտրիայի Բահլ քաղաքների առուների մասին: Այստեղ եւս պարտաւուանունների մասին: Այստեղ եւս պարտաւուանունների մասին: Այստեղ եւս պարտաւուանունների մասին:

Կամ ծովափը հաղիւ 7—8 կիլոմետր հեռաւորութիւն ունենայ: Այս բերդերն եւս խուզարկուի միտքը գրաւում, յիշեցնում են այն մեծութիւնը որ ունեցել են Պահլաւաները Օլթի, Իդ, Սիվրիլի, Փանազկերտ, Բահլ-Պալիսար վտակների ափերից մինչեւ Սեւ Ծովի ափերը աւելի քան 120 կիլոմետր տարածութեան վրայ, որ տեղերում շինուած են յատուկ պահլաւաների տոհմերի համար ապարանքներ, գլեակներ, բերդեր, ամրոցներ, ամառանոց — ձմերանոցներ մեզանից 20 դար եւ էլ աւելի առաջ եւ թողել են իրենց աւերակները գիտական աշխարհին պարզելու տիսուր անցեալը: Այս ամրոց-դղեակների, սրբատաշ ապարանքների եւ տաճարների կողքին յաճախ յատակում կան աչկատարեան նախապատմական այնպիսի որմեր, ամրոցներ, որք յիշեցնում են զննողին այն ըջանը, երբ մարդիկ ո'չ կուան ունէին քարերը փշրելու, ո'չ լծակ ունէին ժայռերը տեղափոխելու, ո'չ չուանի եւ լարի ուղղումներից օգտուել գիտէին. ժայռերն այնպէս են շարել, իրար վրայ դարսել, բորուել, կազմակերպել, որ 50 դար ապրել են եւ սպառնում են այդքան էլ ապրել: Ե՞րբ էր այդ շրջանը, սրանից քանի գար առաջ, զժուար է պատասխանել. անշուշտ Միկենեան շինարարութիւնից շատ առաջ էր, քանի որ այդ շրջանի նիւթերից-արհեստական գտնուած են ծորոխի Աւազանում: Երբ Հաթթերն ու Մետանացիները պղինձ էին հալում ծորոխի Աւազանում, նրանցից եթէ ո'չ վաղ, գոնէ այդ շրջանում պղնձից ամէն տեսակ աման եւ զինք ունենալը կասկածից դուրս է: Գլանաձեւ վիշապաղանց արձանների կերպուածքը եւ այդ Բաղալտի վրայի քանդակները Միկենեան շրջանից շատ են եւ նրանց քանդակուածքը անշուշտ երկաթիղով է կատարուած: Անտարակոյս Հէլլաս գայում գտնուած կիլլուպեան պարիսպներից անունների մասին գալով վաղ են կազմակերպուած ծորոխի Աւազանի աչկատարեան պարիսպները, որոնք ո'չ միայն չորս-հինգ անդամ աւելի վիթիւարի եւ անտաշ քարերից են շինուած, այլ 10—20 անդամ աւելի մեծածաւալ են, անտաշ ու կոպիտ:

Այս բոլորից նկատելի է, որ ծորոխի Աւազանը ունեցել է.

1. Աչկատարեան Ջրան: որը տեւել է դարեր եւ թողել է աշխարհան մեծ յիշատակարաններ, որոնք ցոյց են տալիս, թէ

մարդկային ի՞նչ գերազոյն ճիգեր են թափուել այդ ամբոցների բերդերի եւ պարիսպների վրայ, որոնք կերտուել են դժոխային տանջանքներով:

2. Այս դարին յաջորդել է կոկուած քային դարի շրջանը, երբ մարդիկ ո՛չ միայն քարը կոկել, ուղղել եւ դրանցով պարիսպներ ու աշտարակներ են կառուցել, այլ եւ կոկուած քարից ամէն տեսակ գործիքներ են պատրաստել ու մեզ թողել:

3. Պեճձի դարի նախնական շրջանը. երբ ո՛չ միայն պղնձը բովերից գուրս են բերել մեծամեծ քանակով, այդ պղնձից շինել են զէնքեր, զարդեր եւ ամաններ: Այս շրջանը Ակատ-Սումերների հետ ամբողջ Միջադետքում մտաւոր եւ արհեստների զարդացման հետ է կատարուել, մինչեւ գետերի ակունքը եւ Տայոց-Դայիանի երկիրը:

4. Նայիրի երկրի կենդրոնական մասի — Արարատեան երկրի վիշապազանց զարդացման դարում ձորոխի Աւազանումն էլ զարդացել է Բազալտ քարի կոկելու, յղկելու եւ քանդակելու արհեստը, որը դարեր է տեւել Անահիտի, Միհրի եւ Արամազդի պաշտամման շրջանով:

5. Սեւ Ծովի (Ամասիա-Կոլխիդայի) շրջանը. ոսկու, արծաթի, գործածութեան շրջանը նկատելի է ձորոխի Աւազանում, որ երկար դարեր է տեւել:

6. Բագդատ-Բագրատների շրջանը. որ Ուրարտական շրջանից վաղ է գործել ձորոխի Աւազանում եւ թողել է նշանաւոր հետքեր:

7. Միկենեան-Եգեան շրջանը. որի ժամանակ զարդացած է նուրբ արհեստները ինչպէս կաւային, նոյնպէս թանկագին մետաղների կերտուածներով:

8. Ասուրա-Ուրարտական Ընդհարումների շրջանը:

9. Պարքեւ-Պահլաւների. — նախ եւ յետ Մակեդոնական շրջանը:

10. Քրիստոնէական գաղափարի. — Հէլլէն եւ Հռոմի մուտքը ձորոխի Աւազանումը:

11. Քաղկեդոնիկ եւ Զրադաշտական քաղաքականութեան պայքարի շրջանը. եւ

12. Խոլամական յետագէմ եւ կործանարար շրջանը:

Այս բոլոր շրջանների ժամանակ նկատուելի է, որ Ասիական կամ Յարեթական

դարերից սկսեալ Արիականների տիրող շրջանում աշխատաւորի ունակ ձեռքերը եւ ստեղծագործող միտքը անվերջ գործել են եւ զարդարել ձորոխի Աւազանը. զարդացըրել են ո՛չ միայն անասնապահութիւնը, երկրագործութիւնը, այդեպահութիւնն ու շնարարութիւնը, այլ եւ զարդացըրել են երկիրը ճոխ կերտուածքներով. միայն վերջին-իսլամական շրջանը կործանարար եւ աւերիչ դեր է կատարել եւ քաղաքակրթութեան հետքերի փոխարէն նրա աւերիչ ձեռքերի հետքերն են մնացել: Անշուշտ առանց պեղման, գիտական ուսումնասիրութեան, գժուար է որոշ եղակացութիւններ անել. բայց հեթանոսական եւ քրիստոնէական դարերի հազարաւոր ամրոցների, բերդերի, դղեակների ու արձանների, տաճարների եւ ապարանքների հետքերը վկայում են, որ ձորոխի Աւազանում քաղաքակրթութիւնն ու շնարարութիւնը ձեռք-ձեռքի տուած առաջ են դնացել միշտ. երբ ժողովուրդն անկախ է եղել եւ ինքնուրոյն գործել. իսկ երբ Խալֆական-Խոլամական տիրող իշխանութեան թաթի տակ է ընկել, նա անընդհատ զրկուել է շնարար ընդունակութիւնից եւ կործանման է դատապարտուել:

ԺԴ.

Մամիկոն վտակի Աւազանը եւ նորա շրջակայ վտակ-Առուակները:

Դեվիս վտակի եւ Խչկայա վտակի խառնութից հինգ կիլոմետր ցած ձորոխին աշխից խառնութիւմ է կլասկուրի վտակը, որ իջնում է Սինդիէտ լեռներից. ապա աւելի ցած՝ կիմակուրերի, Կեցցլուրետիս-ցիլին, Զինկուրի, Կարտառուրի եւ Սաքառը առուակները, որոնք Խեղիսմթա լ-րից են իջնում. իսկ ներքին Մարագիաի դէմ առ դէմ խառնութիւմ է Մանիխել վտակը, 25 կիլոմետր երկայնութիւն եւ բազմաթիւ վտակներ ունի, սկիզբն է առնութ Կարճիսալ եւ Սինդիէտ լ-րից: Մաճիխելի գլխաւոր առուակը իջնում է Սինդիէտ լ-րից նախ դէպի հիւսիս ուղղուած մինչեւ Էֆրատա գեղը, որի մօտ ընդունում է Զուչատի առուակը, որոնք ուսուզուած են Աղեգուլի եւ Բագինա եալլաները: Ապա ուղղուելով արեւածա-հիւսիս մանում է Զեդվակէ գեղը, ընդունելով աշխից Կվարիստավի, ձախից՝ Կվակիրէի լեռնե-

րից համանուն գեղերը ոռոգող առուակները : Նոյն ուղղութեամբ առաջ գնալով համառմ է կվեդախերտվիս, որ տեղ աջից ընդունում է Ցիպնար և Սեղիետի հայաներից Մինդիետի և Աքրիասի . ձախից՝ կավտարետի և Գորգացէի առուակները, որոնք ոռոգում են համանուն գեղերը, հասնելով Զիկունետի այգեստանները : Այստեղ Մաճիխել վտակն ընդունում է աջից՝ Կորալետի, ձախից՝ Զիուրտունետի, Սկուրդիտի և Զանիվսա առուակները, ուղղում է արևմուտք ձախից ընդունելով նոյնպէս կեդիեդի և աջից՝ Սիդիխտի և Գվարա առուակները ու խառնում է ձորոխին :

Ինչ զեր որ խաղացել է Արդվինը ձորոխի միջին մասի — Ցրիա, Խշալբուր, Մելօ, Մուտղուլ, Դեկիս և սրանց շրջանի մասին իր արհեստանոցներով մինչեւ 1870 թուականները, տնայնագործութեամբ . նոյն զերը կատարել է Մաճիխել աւանը իր և Աջարա վտակների, Խշալայի, Փէւէվանի վերաբերութեամբ : Երբ 1773ի Գարասուի պարտութեան գոյժը հասաւ Մաճիխել, Լազերը Բէյերի թելագրութեամբ մտան Մաճիխել աւանը, քաշեցին տարան հարս, աղջիկ, պատանի և տղայ . վաճառքի դրին ծովափում, կոտորեցին դիմադրողներին, կործանեցին Մաճիխելը, որոնցից ճարպիկները անստաների միջով ցրուեցան ու հասան Արդվին, Արդանուչ, Օքրոբագետ, Տանձոս և Օլիթ, ապաստանեցին Հայերի-տեղացիների մօտ մինչեւ 1918 : Գալթական Մաճիխելցիների սերունդը յայտնի էր այդ շրջանում :

Ինչպէս որ հարուստ են վանքերով, ամրոցներով, բերդերով և գղեակներով Շաւշէտը, Արդանուչը և Խմերիսւլ . այնպէս էլ հարուստ է Մաճիխելը : Բայց թէ Մաճիխելի և թէ Աջարայի ժողովուրդը վարք ու բարքով այնքան բարբարու են, որ չատ գժուար է այդ զաւառների խորքերը մտնել և ուսումնասիրել առանց վտանգի : Այս պատճառով շատ գժուար է ընդհանրապէս ձորոխի ափերը Պալխարից մինչեւ Բաթում ուսումնասիրել . մանաւանդ Մաճիխել և Աջարա : Այս գաւառների ուսումնասիրութեան համար շատ քիչ նիւթ կայ, եղածն էլ կասկածելի է : Նոյն իսկ առուական պաշտօնական ուսումնասիրողները գանդատուել են 1878—1917 տարիներին :

ԺԵ.

Աջարա կամ Եղերի:

Ճորոխի վերջին եւ ամենամեծ վտակը Աջարան է, իւր 120 կիլոմետր երկարութեամբ, որ ձգւում է արեւելքից, Զիրուխնարին - Բաշի լեռներից մինչեւ Ճորոխի ափը, Բաթումից 12 կիլոմետր աւելի հարաւ-արեւմուտք : Այս երկար և մինչեւ 20 կիլոմետր լայնութիւն ունեցեղ Աւազանի միջից անցնում է Աջարա վտակը, որ ընդունում է աջից՝ Գուրիայի լեռներից և ձախից Շաւշէտի լեռներից բազմաթիւ մեծամեծ վտակներ, որոնք մեծամեծ սահանքով իջնում են լեռներից, ոսոգում են երկիրը և Աջարային միանալով՝ դնում են մեծացնելու ձորոխի ջրերը :

Աջարա վտակի ակունքը կեխվենի եայլայից սկսելով՝ նախ ուղղուում է հարաւ-արեւմուտք, մինչեւ Ռիկերի գեղը . ձախից ընդունելով Բակաձէ Եայլա, Դանիս-Պարաւլիտի և աջից՝ Ցիդաշարա առուները . ապա ուղղուում է արեւմուտք հասնում է Բեգլետի գեղը, ձախից ընդունելով Դիակ-Աջարա աւանը, այնպէս Կարտովի առուները : Այստեղից արեւմտահիւսիս է ուղղուում մինչեւ Դիկ-Աջարա աւանը, այնպէս ուղցիւնելով Ցացիխուրի, Գուդասխենի և Գորչոմի միացեալ և Դայիխնեսի, ձախից՝ Տագօ առուակները, որոնք բղխում են և իջնում Սակուլափերդի լից . Հիւսիսից և Արդելուի լից հարաւից :

Դիգի - Աջարայից թեքում է վտակը հարաւ-արեւմուտք, անցնում է Խուլա, Գորչմելիմէ, Ալմէ, Զաօ և Կեդլիրի գեղերը ուղղելով՝ ընդունում է Սխալտա մեծ առուակը, որ իջնում է Արսիան լից : Սխալտան գէպի արեւմուտք և քիչ էլ հիւսիս թեքուած ընթանալով՝ ընդունում է այնպէս Բակօ (Վակա), Կարպետու առուակները, որոնք գուրս են գալիս համանուն լճակներից, ուղղելով համանուն եւ Մումեսուի գեղերը իրենց պարագաներով : Այդտեղ միանում է Թիվիլան առուակը համանուն գեղից : Սխալտան աւելի առաջ գնալով՝ ոսոգում է Խիխօճիրօ, Նադաբմիր, Աբուլաձէ, Պուշտուկաուի, Մախալկուրի գեղերը, ուր աջից ընդունում է Պուշտուկաուի և ձախից՝ Վերների առուակները : Խիխօճիրի մօտ է Վարդից-Ցիլսէ կիսականգուն բերդը ընդարձակ աւերակներով : Առաջ

գնալով՝ ընդունում է աջից կվատիա, Ցոր-
լանա, Ելելիձէ, Սխալտա, Պոչխա, Չամա-
գուլա. ձախից՝ Վերների, Մախալկուրի,
Կիննառուրի, Խոզրովանիձէ, Պապովիլերի,
Պուրտի և բազմաթիւ մանր առուակներ
և Չամենի մօտ խառնում է Աջարա վտա-
կին: Աջարան ուղղուելով արեւմուտք, աջից
ընդունում է Նիգոգառուրի, Չամիխալո, և
ձախից՝ ձիլլարի, Բուլղուրառուրի առուակ-
ները մինչեւ հասնում է Գորխանառուրի
գեղը: Այստեղ Աջարա վտակին խառնում է
Մարիտիսի մէծ առուակը, որ իջնում է Դե-
միր-Կափու լից, դէպի Հիւսիս արեւմուտք
ուղղուած՝ 22 կիլոմետր երկարութեամբ
անցնում է Ցիլատի գեղից, հասնում է Դար-
չիձէ գեղը, ուր ընդունում է աջից Դար-
չիձէ և ձախից՝ Թամաշէտի առուները:
Միշտ միեւնոյն ուղղութեամբ ընթանալով՝
անցնում է Կոլոշնարի, Շուրան, Եակո-
րաձէ, Կորալտա, Կուրտառուր, Մախալա-
կիձէ գեղերը, որոց մօտից հոսող համանուն
վտակները միանում են Մարիտիսխենին:
Այստեղ ձախից միանում է Էրբովարի
առուակը, որ իջնում է Շուրիձէ լից,
ապա նոյն կողմից միանում է Զումուշառ-
րա, Մացկվալտա, Կարապետի և Լամա-
նառուրի առուակները, որոնք իջնում են
Շաւշէտի լեռներից: Այս հովտումն են Պա-
պօվիլերի, Ոլադառուրա, Կվիախիձէ,
Դգվաշ, Իրեմաձէ, Լալամբերի, Կիձինաձէ,
Դունդառուրի, Զարնիձէ և Օքրովիլառուրի
գեղերը: Նոյնպէս Շաւշէտի լից իջնում
է Տքետ առուակը, որ ոսոգում է Գոգաձէ,
Տքետ, Ցուրլանա, Մոշների, Սամուլետի,
Ցինարիձէ և Լակլակիձէ գեղերը, որոնք
բոլորն էլ ոսոգում են համանուն առու-
ներով:

Աջարա վտակը Գորխանառուրի գեղից
Հիսիս-արեւմուտք ուղղուելով՝ հասնում է
Ախալդարա գեղը ընդունելով աջից Չուան
առուակը, որ իջնում է Հիւսիսից-Հարաւ-
թագինառուրի լից: Չուան առուակը ոսո-
գում է Վ. Եւ Ա. Նազվարէրի, Պոտարո,
Ադագօլիա, Ինձկվերիդի, Ցկիս-Սագարի,
Սատափլիա, Զանմուրի, Բրելի, Լում-
նառուրի, Խաբիլաշվիլերի, Ցեկվա, Ցիլմ-
լեսի, Վարչանառուրի, Վան, Ճալա, Գումար-
դառուրի, Բարատառուրի, Ցինտարիձէ, Դից-
չվան, Զիրկվաձէ, Ցիորտառ և Տակիձէ
գեղերը, որոց ամէն մինի մօտից անցնում
է համանուն առուակը, ոսոգելով եալու-

ները, մացրաները, ախոռները, կշակները
և աւելակները: Ախալդարայից մինչեւ
Կեդա աւանը արեւմտահարաւ է ուղղուած
Աջարա վտակը, ընդունելով աջից Գեղե-
լաձէ, Ախո և Ցանարիսի առուները, որոնք
բարձր են թերատ լից եւ ոսոգում համա-
նուն գեղերը: Գեղելաձէ լեռնից իջնում է
նոյն անուն առուակը և ոսոգում է Գեղե-
լաձէ գեղը: Ապա խառնում են Տքետ, Վար-
չանիսի, Զվարէ, Զեսօպէլի, Զեղալսերտ-
վիս Ն., Գուլերի, Ցինմլի և Զենդիտի
առուակները համանուն գեղերից: Խոկ ձախ-
իղմից ընդունում է Դարացլերի, Կայա-
բաշի, Օրգիալի, Դանդալո, Կոկնատառուրի,
Կոնտառուրի, Ցիմորեսի, Արուկետի, Կվաշ-
տա, Վայիօ, Ակուցա և հասնում է Կեդա
աւանը:

Կեղայից քիչ արեւմուտք Աջարային
խառնում են Շավարուրի և ապա Մորիսի
վտակները, որոնք իջնում են Կորդա լից
և միանում են ձախից Կորդա առուակին.
ոսոգում են Ազուտա, Մեծիբնի, Կելատի,
Նամնասարեվիլի, Առմախար-Շավարուրի,
Կուչուլա, Զագրեստալի, Մերիսի, Սամ-
գգերի, Սամսարի, Ալիք օղի, Սամգգորշ-
վարուրի, Որցվա, Օրբամէկիէ, Խոլսինի-
դերէ, Զենիմինա և Արսանառուր գեղերը
իրենց պարագաներով: Կեղայից արեւմտա-
հարաւ ուղղուելով Աջարա վտակն ընդու-
նում է աջից Ագարա¹, Մախունցետի Փ.,

1 Ագարակները խշպէս շատ էին խոպիրում, բա-
րերանում, Կիսկիմում, Թորդումում, Օլթիում, նոյն-
պէս շարունակում են Շաւշէտ-Խերիեւում, Արգանուշ-
Ռորինում, Խատիլարում, Մուրզուլում, Մաժիխելուր
և Աջարայում Հետեւարար զարգացած էին ագարակ-
ները Տայքում-Ճորիսի վերին վատիների շորջը. նոյնը
կատարուել է ստորին վատիների ափերում: Հետեւարար
քաղաքակրթութիւնը Հելլենական և Հռոմէական-Լատ-
իոնակի հաւասար զարգացել է, Ճորիսի աւազնում
ծայրէ ծայր և գլորուել է միաժամանակ: Խնչպէս ագա-
րակները, նոյնպէս ամրաները, բերդերը, գեղակները ու
տաճարները եւ ուրիշ կերպուածներ աստիճանաբար զար-
գացել. բարձրացել եւ գլորուել են միաժամանակ ամ-
բողջ Ճորիսի աւազնում. ուշ մի գաւառ միւսից եւ չ
թացել:

Աջարայի ամրոցների եւ առանձների շնութեին-
ների աւերակները միանման են Ճորիսի աւազնի միւս
գաւառների կործան-և մեծերին, միայն կրծամուների աւե-
րածները պատեղ աւելի խիստ են կատակելի: Ագարակների
այնքան մէծ թիւ կայ Ճորիսի աւազնում, որ ստիպուած
խուզարկուն ընդում է դրանք եւ հասնում մէ այն եղբա-
կացութեան, որ բոլորն եւ զարգացել են, բարձրացել
միաժամանակ չառօթ եւ Հելլագայի ագարակների բարձ-
րացման շրջանում, երբ էլեանս-կալուածատէսերը աբնում
էին Հասմէական Պատրիկներին ընդօրինակել եւ նբանց
դման ստրու կեների ծեռքով հշակուած սեփական կալուած-
ների տերեւ: Ճորիսի աւազնում գտնաւած յատուկ ձի:

Սագորեսի, Մոխունցեսի Մ., Բարուշովի, Դօլոգանի, Զինկաձէ, Կապնիս-Թավան Կիբէ առուակները համանուն գեղերից, որոնք ոռոգում են այս գեղերը իրանց պարագաներով. Ճախից ընդունում է Խոյսնա, Բգուրգու, Ուչլոտ, Մահլազանի եւ Մելիսի առուակները եւ Խերտվիսի մօտ խառնում է ձորոխին, որ Բաթումից 3 կիլոմետր հեռաւութեամբ թափում է Սև Ծովը կաղմելով մի մեծ գելտա 8 կիլոմետր լայնութեամբ եւ 11 կիլոմետր երկարութեամբ:

Ժ2.

Կոբուշի եւ Կինդրիշի:

Բաթում քաղաքից եւ նաւահանգստից դէպի հիւսիս մինչեւ Կոբուշի կայարանը, մինչեւ Աչխուա առուակը Աջարայի մասն է կազմում: Ձորոխի գելտան են թափում Կապնիս-Թավի, Կապանդերի, Էրգէ, Զաջօ, Խելվաչառի, Շիրաբուճէ, Կախաբերի դաշտում ձմեռանոցներ. Թոփալ-օղլի, Մէկիէ, Ստեփանովկա եւ Լիմանի քաղ: Բաթումի հարաւային Ալսաշէն լեռներից իջնում է համանուն առուն, որ ոռոգում է համանուն գեղը, Սոուգու, Իջափիէ, Մամուդիէ եւ Ֆեյջիկ արուարձանները եւ Բաթում քաղաքի մօտ թափում է ծովը:

Կորոնիս-Թավի լից իջնում է համանուն առուակը, Օքարաքում, Ագարա, Կապրիշառի եւ Բարձէխանա գեղերը ոռոգելով՝ թափում է ծովը: Ապա Կարաղերէ, Մանել-օղլի, Բագրատ-օղլի, Մախինառուրի առուները համանուն գեղերը ոռոգելով՝ թափում են ծովը: Զակիսիմքա լեռներից համանուն եւ Բեզլեմար, Մորվել լեռներից Զակիսիմքա լի, Զակիսիմքա լի, լեռներից համանուն առուն, Դագուտ լից. Բգենիս առուն, իջնում են միանում, կազմում Զակ-միս վտակը, ոռոգում են դաշտում Խալա, Գորգաձէ, Դիդջամէ, Խելվաշի եւ Զակիս վտակը, ոռոգում են դաշտում Խալա, Գորգաձէ, Դիդջամէ, Խելվաշի եւ Զակիս վտակը, ոռոգում են դաշտում Խալա, Գորգաձէ, Դիդջամէ, Խելվաշի եւ Զակիս վտակը, ոռոգում են դաշտում Խալա, Գորգաձէ, Դիդջամէ, Խելվաշի եւ Զակիս վտակը, ոռոգում են դաշտում Խալա, Գորգաձէ, Դիդջամէ, Խելվաշի եւ Զակիս վտակը:

Դագուտ լեռների հիւսիսային վեցերից իջնում է համանուն առուակը ոռոգում է

Համանում եւ Բոբոգավի գեղերի հանդերը եւ Պանտուրանի մօտ թափում է ծովը: Կինարիլ գեղերը սկսում է Խինս լեռներից, իջնում է Ցերմուխիս-Գիլէ, Սակարիս-Գիլէ, Սատգետիս-Գիլէ, Զիմոխինս, Մեսիմիձիրէ, Զերաբոսելի, Ուրտխնալի, Խերկինալ, Զիխվարալի, Ցիսեմլորանի, Միսելովանի, Կոբալառի, Տկեմակարավի, Վարջանաւուի, Կեցիետի, Սողոմուրի, Զախատի, Կոխի, Օստուրի, Խուցուրանի, Զենիտի, Կոբուշետի, Կանդետի, Սամերա գեղերը եւ Կաբուլետի կայարանը, 32 կիլոմետրը ըեթացքից յետոյ:

Զուրուք-Սուն սկսում է Աչկվիսթավի բարձունքից, սահման է կազմում Կենդրիչի գաւառակի եւ Գուրիայի, ոռոգում է Զեգեղինա, Ակուրա, Ցիրապանա, Ալամբարի գեղերը, անցնում է Ալամբարի աւերակ տաճարի մօտով եւ թափում ծովը Սմեկալովդայի մօտ:

Ղեղական:

ԱԺՊԵՏ

(Անդէ):



ՄԱՅԵՆ ԱԽՈՍԱԿԱՆ

ԴԱՂԲԱՇԵԱՆ Յ. — Ռուս-Հայերէն լիակատար Թառարան 10 պրակներից. Երկրորդ հրատարակութիւն. Պատկ Ա. Թիֆլիս 1927:

Մեր ոռուսագէտ հասարակութեան ծանօթ են արդէն Դաղբաշեանի հրատարակած Հայերէն-Ռուսերէն (1911) եւ Ռուսերէն-Հայերէն (1906) բառարանները: Այս վերջնոյս երկրորդ հրատարակութեան ձեռնարկած է վերստին անխոնջ բառագրագէտը, մանաւորապէս ճոխացնելով՝ աշխատութիւնը «յետ պատերազմեան» գիտական բառորով: Պատերազմը ինչպէս կերպարանագուեց ազգագրական սահմանները, նոյնպէս այլաշրջեց լեզուներու արտաքին տարագը մերթ «ի լաւն»՝ յառաջադիմութիւն եւ մերթ «ի յուփն»՝ յետադիմութիւն եւ խառնակութիւն:

Այսպէս «ի լաւն» փախուեցաւ ոռուսէն լիկուին գրչութիւնը, որուն այլենա-

թենիների պարտէզները, Խազով այգեստանները, պաղատ ծառերի պարտէզները, Ընկուզոցները, Կաղնիոցները մատածելու, որ գրանք ընդունութիւնները, Նշոցները ստիպում են մատածելու, որ գրանք լատիֆունդարինակուած են Յունաստանի եւ Խազարյանի latifundia-